

ԵՍԵՆԻՆԻ ՉԱՓԱԾՈՅԻ ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԹԱՐԳՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ս. ՔԱՄԱԼՅԱՆ

Թարգմանության տեսությունը միայն լեզվաբանական գիտակարգ չէ, թարգմանությունը սոսկ լեզվական համապատասխանությունների որոնում է, այստեղ կարևոր դեր ունեն արտալեզվական գործոնները: Իրո՞՞հի Լևին ասում է, որ «թարգմանությունը միշտ էլ այս կամ այն չափով մեկնաբանություն է (ինտերպրետացիա)»¹: Բայց որպեսզի մեկնաբանությունը ճիշտ լինի, թարգմանիչը ոչ միայն պիտի լավ իմանա բնագրի լեզուն և մանավանդ այն լեզուն, որով թարգմանում է, այլև՝ համակողմանի ուսումնասիրի թարգմանվող հեղինակի լեզուն և ոճը, նրա ապրած ժամանակաշրջանը, ժամանակի գրական-գեղարվեստական ուղղություններն ու հոսանքները, բնագրի ազգային առանձնահատկությունները ևն:

Երկու լեզվական համակարգերի ամհամապատասխանություններն ու արտալեզվական տարբեր գործոններն անխուսափելիորեն հանգեցնում են թարգմանչական փոխակերպումների (տրանսֆորմացիա): Լ. Բարխուդարովը բոլոր փոխակերպումները պայմանականորեն բաժանում է չորս խմբի՝ տեղափոխություն, փոխարինում, հավելում և բացթողում՝ մշեղով, որ դրանք հազվադեպ են հանդես գալիս առանձին-առանձին²:

Խոսելով բնագրի վերաարտահայտման մասին՝ Ի. Լևին ընդգծում է, որ «թարգմանիչը ... առաջին հերթին պիտի ոճաբան լինի»³:

«Ոճը մտքերն արտահայտելու համար ընտրված լեզվական միջոցների ու եղանակների տարբերությունն է»⁴: Խոսքի պատկերավորման միջոցները բազմաթիվ են, և յուրաքանչյուր գրող ունի նախասիրած միջոցներ՝ պայմանավորված իրականության իր ընկալմամբ, աշխարհայացքով, գեղագիտական ճաշակով ևն: Որքան էլ որ անխուսափելի են թարգմանչական փոխակերպումները, թարգմանիչը չի կարող հաշվի չառնել թարգմանվող հեղինակի լեզվաոճական առանձնահատկությունները:

Սերգեյ Եսենինի բանաստեղծությունները հայերեն են թարգմանել Վահագն Դավթյանը, Համո Սահյանը, Գևորգ Էմինը, Պարույր Սևակը, Հրաչյա Թամրազյանը⁵: Քննության առնված օրինակները հիմնականում «Москва кабацкая», «Любовь хулигана», «Персидские мотивы» շարքերից են ու վերջին տարիների գործերից:

Պատկերավորման միջոցներից ամենահաճախ գործածվողը, ինչպես գիտենք, մակդիրն է՝ հուզական-գնահատողական երանգ ունեցող որոշիչը, որ հիմնականում արտահայտվում է ածականով, դերբայով, գոյականով:

Սոմերսեթ Մոեմը գրում է. «Ես իմ առջև անհասանելի նպատակ էի դրել՝ բացարձակապես ածականներ չգործածել: Ինձ թվում էր՝ եթե գտնեն միակ ճիշտ բառը, կարելի է յուր գնալ առանց մակդիրի»⁶:

Այլ կերպ է վերաբերվում մակդիրին Գաբրիել Գարսիա Մարկեսը. «Ինձ համար անենա-

¹ И. Левый, Искусство перевода. М., 1972, с. 66.

² Ст'ю Л. Бархударов, Язык и перевод. М., 1974, էջ 193:

³ И. Левый, նշվ. աշխ., էջ 77:

⁴ Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզվի ոճաբանություն: Երևան, 1988, էջ 3:

⁵ Վ. Դավթյանի, Հ. Սահյանի, Գ. Էմինի, Պ. Սևակի թարգմանությունները մեջբերվում են ըստ Ա. Բլեյ, Ս. Եսենին, Բանաստեղծություններ, Երևան, 1986, Հր. Թամրազյանի թարգմանությունները՝ ըստ «20-րդ դարասկզբի ռուսական բանաստեղծություն», Երևան, 1982 և Ս. Եսենին, Բանաստեղծություններ, պոեմներ, Երևան, 1982:

⁶ Մեջբերվում է ըստ В. Виноградов, Стилистика. Поэтика. М., 1963, էջ 150:

մեծ դժվարությունը ածականն է, ածականի տեղը: ... Ածականն այն է, ինչ զանազանում է մի գորղին մյուսից. դա իրականությունը տեսնելու նրա եղանակն է, գույնը, ձայնը»⁷:

Իսկ ինչպիսին է Սերգեյ Եսենինի՝ «իրականությունը տեսնելու եղանակը»: Ա. Սարգենյանն ասում է, որ «Եսենինի պատկերները ոչ միայն վառ են ու գունեղ, այլև հոտափետ ու զոնգուն: Եվ բույրերն ու ձայները նույնքան կոնկրետ են ու շոշափելի, որքան գույները»⁸:

Ուսումնասիրողները հաճախ են ընդգծում, որ Եսենինի չափածոյին շատ բնորոշ են հաստատուն պատկերները. «Նրա պատկերները մի բանաստեղծությունից մյուսն են անցնում՝ աստիճանաբար լրացվելով մանրամասներով»⁹:

Այսպես, ընդհանուր առմամբ կայուն է Եսենինի գունային սիմվոլիկան, և, որպես կանոն, գունային սահմանները հստակ ընդգծված են:

Կապույտն ու երկնագույնը Եսենինի ամենահաճախ գործածվող գույներն են, նրա պոեզիան ուղղակի ողողված է կապույտով:

Թարգմանությունների մեջ երբեմն բնագրի մակդիրի ճշգրիտ բառարանային համարժեքն է «свннй» - «կապույտ» և «голубой» - «երկնագույն».

“Сине счастье” - «Բախտ իմ կապույտակ» (Վ Դ), “Май мой свннй! Июнь голубой” - «Մայիս իմ կապույտ, երկնագույն հունիս» (Յ Թ), “Голубая кофта. Сине глаза.” - «Բաճկոնակ մի երկնագույն: Աչքեր կապույտակ» (Վ Դ) և «երկնագույն բաճկոն ու կապույտ աչքեր» (Յ Թ), “Отсвет лунный, свннй” - «Լուսնայակի ցոլքում կապույտակում» (Վ Դ), “Холод осени свннй” - «կապույտ սառնամանիք» (Պ Ա), “Свет такой свннй!” - «Այս կապույտ լույսը» (Գ Է), “В свннх дремах” - «Նիրհի մեջ կապույտակ» (Յ Ա)...

Բավական հաճախ բնագրի «голубой» - «երկնագույն» մակդիրը թարգմանությունների մեջ փոխարինվել է «կապույտ»-ով, «կապույտակ»-ով.

“Голубую оставял Русь” - «Եվ իմ Ռուսիան ես թողի կապույտակ» (Յ Ա), “Стережет голубую Русь” - «Կապույտ Ռուսիային արթուն կիսկի» (Յ Ա), “Сад в голубых вкрапах” - «Մեր այգուն կապույտ, մեղմ թոն է մաղում» (Յ Թ) և «Մեր... այգին կապույտակ» (Վ Դ), “И спряня шелест голубой” - «Յասամանի կապույտ սոսափյուն» (Յ Ա) և «Յասամանների շրշյուն է կապույտ» (Յ Թ), “Все встело в дыму голубом” - «Ողջը հավել է մուժում կապույտակ» (Վ Դ), “пожар голубой” - «կապույտ հրդեհ» (Յ Ա), “Дом с голубыми ставнями” - «Կապույտ փեղկերով տուն» (Վ Դ)...

Այս փոխարինումները երևի պիտի բացատրել և հայկական բանաստեղծության ավանդույթներով (կապույտն ավելի բնորոշ գույն է), և չափածոյի առանձնահատկություններով ընդհանրապես, երբ կա չափի, ռիթմի, հանգի և ն խնդիր:

Լևին թարգմանության բառապաշարի ոճական աղքատացման հիմնական դեպքերից է համարում այն, որ թարգմանիչը չի օգտագործում իր լեզվի հոմանիշների հարստությունը, «երբ թարգմանության մեջ բացակայում են այնպիսի միջոցներ, որոնք բնագրի լեզվում պարզապես չկան»¹⁰:

Օրինակ՝ ռուսերենը չունի «կապույտի» այնքան հոմանիշներ, որքան հայերենը: Հայ թարգմանիչները բառարանային ճշգրիտ համարժեքի փոխարեն գործածել են նաև այլ հոմանիշներ՝ միօրինակությունից, ամհարկի կրկնություններից խուսափելու համար՝ կապույտակ, կապույտակում (տե՛ս արդեն բերված օրինակները), լուրթ, մով, բիլ:

“Воздух прозрачный и свннй” - «Օդն է թափանցիկ, և ուրթ ու անապակ» (Պ Ա), “Смотришь так свннми брызгами” - «Ի՞նչ ես նայում և ուրթ շիթերով» (Յ Թ), “сине чаши” - «թավուտները և ուրթ» (Վ Դ), “вечером свннм” - «Մի մ ո վ իրիկում» (Վ Դ), “Голубая да веселая страна” - «Խնդազան երկիր, օ՛, երկիր դու մ ո վ» (Վ Դ), “И глаза покрываются голубой длевотой” - «Եվ փախուքն է նրա Բ՛ի և աչքերը պատում» (Գ Է)...

Արդեն մշել ենք, որ թարգմանությունների մեջ կարող են հավելումներ լինել: Եսենինի բանաստեղծությունների թարգմանությունների մեջ «կապույտ» մակդիրի (կամ դրա հոմանիշների) հավելումները հիմնականում պատճառաբանված են նրանով, որ այն շատ բնորոշ է նրա չափածոյին ընդհանրապես:

Օրինակ՝ Վ. Դավթյանը “Мне приснилось рязанское небо” տողը թարգմանելիս հավելել է

⁷ Մեջբերումը քառ է. Հարությունյան, Գեղարվեստական խոսք, Երևան, 1986, էջ 135-136:

⁸ А. Марченко, Поэтический мир С. Есенина. М., 1989, с. 16.

⁹ Նույն տեղում, էջ 78:

¹⁰ И. Левый, մշլ. աշխ., էջ 80-83:

«կապույտը»՝ «Դև տեսա կապույտ երկիրն իմ գյուղի»։ Նա նույն մակդիրը հավելել է նաև «отвучавшие в сумрак года» տողում՝ «Տարիներս... աղմկեցին կապույտ մշուշում»։ Զր. Թամրազյանը նույնպես այս մակդիրն է հավելել «Словно я весенней гулкой рашью Проскакал...» տողը թարգմանելիս՝ «Կարծես գարնան զնգուն, կապույտ մի առավոտ...»։ Պ. Սևակը «Под шуршащим дождем тумана» տողի թարգմանության մեջ հավելել է «կապույտի» հոմանիշ «բիւր»՝ «Բիւ մուտի մեջ»։ Իսկ եմինը «լուրթ» հոմանիշն է հավելել «У вас была тоска в глазах уставых» տողում՝ «Թախիծ կար ձեր լուրթ, Զոգնած աչքերում»...

Բայց յուրաքանչյուր փոխակերպում պիտի պատճառաբանված լինի։ Իսկ Զր. Թամրազյանը, օրինակ, «Все пройдет, как с белых яблонь дым» տողը թարգմանելիս հավելել է «կապույտը»՝ «Ինչպես կապույտ մի ծուխ ծաղկած խնձորենուց», սակայն այս դեպքում հավելումը տեղին չէ, որովհետև Եսենինը «дым» բառը օգտագործում է ծաղկած ծառերի վերաբերյալ («Кадит черемуховый дым», «В сиреяевом дыму»), իսկ խնձորենու ծաղիկները ճերմակ են, ոչ թե կապույտ, առավել ևս, որ բնագրում հենց «ճերմակ» ածականն է։

Եսենինի չափածոյի կայուն գույներից են նաև ոսկեգույնն ու դեղինը, նրա «ինքնանկարներից» շատերն արված են հենց կապույտով ու ոսկեգույնով. «Желтоволосяй, с голубыми глазами», «Золотая моя голова», «Эх ты, златоглавый!», «Были синие глаза, да теперь поблекли»...

«Золотая» մակդիրը թարգմանությունների մեջ հիմնականում մի քանի հոմանիշ ունի ոսկե, ոսկեղեն, ոսկեգույն.

«Золотая ... Азия» - «Ոսկե Ասիա» (Պ Ա) և «оскелет» (Զ Թ), «золотые пески» - «ոսկե ալվազ» (Զ Թ), «Золотая словесная гряда» - «խոսքերի ոսկե շղջեր» (Վ Դ), «лества золотая» - «ոսկեղեն տերև» (Գ Է), «Сердце станет глыбой золотой» - «Սիրտս գուրծ կլառնա ոսկեղեն» (Զ Ա)...

Բավական հաճախ բնագրի՝ ածականով արտահայտված մակդիրը՝ «золотой», թարգմանությունների մեջ փոխարինվել է գոյականով՝ «ոսկի»։ Պ. Պողոսյանն ասում է, որ «թեև ածականն է կոչված դառնալու մակդիր, բայց առավել ուժեղ բնութագրվող մակդիր են դառնում գոյականները։ Այդ այն պատճառով, որ եթե ածականը կամ բայը մեկ հատկանիշով են բնութագրում առարկան, ապա գոյականը՝ հատկանիշների մի ամբողջ խմբով»¹¹։ Բերենք օրինակներ.

«Закурялась лества золотая» - «Պտտվեց ոսկի տերևների շուն» (Զ Թ), «Отжелела Золотая моя голова» - «Ծանրացել է իմ գլուխը ոսկի» (Պ Ա) և «Осели глыбы слова золотые» (Զ Թ), «В сердце своя золотых сума» - «Սրտումս՝ ոսկի երազներ անանց» (Զ Թ), «Золотые, далекие дали» - «Իմ հեռավոր, ոսկի ծիր» (Զ Թ)...

«Դեղին» մակդիրը երբեմն, ոսկեգույնի սման, լույսի, պայծառության, հրաշքի խորհուրդ ունի, ինչպես, օրինակ, «Месяца желтые чары» - «Լուսնի դեղին դյութանքը» (Պ Ա), «Месяца желтая прелесть» - «Սահիկի դեղին հրաշալիքը» (Պ Ա), «мальчик ... желтоволосяй» - «ոսկեղեն մազերով» (Գ Է)...

Բայց ավելի հաճախ, հատկապես 20-ականների գործերում, «դեղինը» դառնում է թախծի, բաժանումի, մահվան խորհրդանիշ։

Լուսինը արդեն «желтый ворон» է՝ «դեղին ագռավ» (Զ Ա), «оскелет» աշունցի մնացել է միայն «желтый тлен и сырость» - «դեղին մոխիր» (Վ Դ) և «խոնավ ու դեղին աշուն» (Զ Թ), բանաստեղծն իր հոգին սմանցնում է «желтый скелет»-ի՝ «դեղին կմախք» (և՛ Գ Է, և՛ Զ Թ), «դեղին» մակդիրով է բնութագրվում նաև թախիծը՝ «Под гармоникой желтая грусть», որ Թամրազյանը թարգմանել է՝ «Հարմոնն է դեղին կարոտ շաղ տալիս»։

Եսենինի գունապնակում ոսկեգույնի ու դեղինի ամենատարբեր երանգներ կան лимонный, рыжий, ржаной, соломенный, овсяной, ржавый, злато-карий...

Հայ թարգմանիչները նույնպես օգտագործել են տարբեր գուներանգներ՝ երբեմն բնագրի մակդիրի բառարանային ճշգրիտ համարժեքը, երբեմն՝ հայերենում եղած այլ հոմանիշներ՝ շեկ, ծիրանի, ոսկեդեղձան, հրեղեն, շիկակարմիր ևն։

«Лимонный лунный свет» - «լուսնի լիմոննե լույս» (Վ Դ), «лимонный свет заката» - «վերջալույսի լիմոննե լույս» (Զ Ա), «лимонная ... заря» - «լիմոննե ... արշալույս» (Զ Ա), «Золотые пески Афганистана» - «Աֆղանստանի ավազները շեկ» (Վ Դ), «Волос золотое сено» - «ոսկեդեղձան խոտը մազերիս» (Վ Դ), «Мое стадо рыжее» - «Նախիր իմ շի-

¹¹ Պ. Պողոսյան, Խոսքի ճշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք 2, Երևան, 1991, էջ 45։

կա կարմիր» (Հ Ա), «Золотая словесная гряда» - «Վ ա ռ, հ ի բ ե ղ ե ն մի բառակույտ» (Հ Թ), «златотканное цветение» - «Ծ ի ր ա ն ա վ ա ռ գգեստ» (Հ Թ)...

Եսենինի չափածոյում ոսկեղեղինի երանգների հարստութեամբ է պայմանավորված դրանց հավելումը թարգմանությունների մեջ:

Օրինակ՝ Սևակը «заревая теплынь»-ը թարգմանել է «Ծ ի ր ա ն ա վ ա ռ խեղդոց ու տոթ»։ Զր. Թամրազյանը «ոսկի» մակդիրը հավելել է «Знаю я, что не цветут там чаши» տողը թարգմանելիս՝ «Իսկ այնտեղ չկա թավուտն այն ո ս կ ի»։ Դեղինը, ինչպես արդեն նշել ենք, Եսենինի համար մահվան, թոշնումի խորհուրդ ունի, ուստի պատճառաբանված կարելի է համարել «Осыпает мозг алкоголь» տողի թարգմանության մեջ Էմինի հավելումը՝ «Եվ թափվում է օղուց Իմ ուղեղը դ ե ղ ի ն» (փակագծում նշենք, որ նույն գործի մի այլ տարբերակում Էմինը վերոհիշյալ տողը թարգմանել է առանց այդ հավելումի՝ «Օղի է թափվում իմ թմրած ուղեղին»)։

Հավելումները կարող են պատճառաբանված լինել նաև, հաստատուն պատկերներով։ Օրինակ՝ Եսենինն այսպիսի պատկեր ունի. «А эта разве голова тебе не роза золотая?», որ գրեթե նույնությամբ կրկնվում է՝ «Я милой голову мою Отдам как розу золотую», կամ որոշ փոփոխություններ է կրում՝ «Куст волос золотистый вянет», որ Սևակը թարգմանել է «Մազերիս ոսկին թոշնում է արդեն»՝ ածական մակդիրը փոխարինելով գոյականով:

Այս հաստատուն պատկերներով են պայմանավորված թարգմանիչների հավելումները «Ах, увял головы моей куст» տողում՝ «Թոշնել է գլխիս թուփը ո ս կ ե գ ու յ ն» (Հ Ա) և «Մազերիս ո ս կ ի թուփն է թռռամում» (Հ Թ):

Դրանցով են պատճառաբանված նաև, Էմինի հավելումները «Мойх волос качивавшийся пусыр» տողի թարգմանության մեջ. նա երկու մակդիր է հավելել՝ «Իմ շ ե կ մազերի բոցը հ ու ռ հ ի ր ա ն»:

Մակդիրների մեջ առանձին խումբ են կազմում օքսիմորոնները, երբ կապակցվում են հակադիր, իրար ժխտող, կամ պարզապես անհամատեղելի բառեր: Բառերի նման անսպասելի զուգակցումները մեծացնում են խոսքի արտահայտչականությունը:

Եսենինը բավական հաճախ է օգտագործում պատկերավորման այս միջոցը: Բերենք մի քանի օրինակ.

*Кого позвать мне? С кем мне поделиться
Той грустной радостью...?*

Հականիշ բառերով կազմված «грустная радость» օքսիմորոնը թարգմանիչները տարբեր հոնմանիչներով են թարգմանել՝ Սահյանը՝ «Ո՞ւմ հաղորդեմ Իմ այն վշտալի ուրախությունը» Թամրազյանը՝ «Ո՞ւմ հետ կիսեմ Դառն այս խինդը»:

Հականիշներով կազմված «Какая грусть в кипении веселом» օքսիմորոնը Դավթյանը թարգմանության մեջ պահպանել է՝ «Ինչպիսի՜ թախծ ուրախության մեջ այս...», իսկ Թամրազյանը՝ ոչ. նա բաց է թողել հակադրության անդամներից մեկը՝ «весельи» մակդիրը՝ «Ինչո՞ւ են տխրում օրերի եռքից»:

«Տխրություն» բառը Եսենինը զուգակցում է «քնքշանք»-ի հետ՝ «Нежность грустная русской души», որ Դավթյանը թարգմանել է «Ուսուկան հոգու քնքշանքը տխուր»:

«Քնքուշ» մակդիրով է բնութագրվում ցավը՝ «Я нежно болею вспоминаям детство»: Թարգմանության մեջ Էմինը բաց է թողել մակդիրը՝ «Ես հիվանդ եմ իմ մանուկ օրերի հուշերով անզին»:

«Ցավ»-ը Եսենինը զուգակցում է նաև՝ «հաճելի», «մեղմ» բառերի հետ՝ «Сердцу приятно с тихой болью»: Դավթյանի թարգմանության մեջ օքսիմորոնը պահպանված է՝ «Հաճելի է ինձ ցավով մի լռին...»:

«На душе холодное кипенье» օքսիմորոնը Թամրազյանը թարգմանել է «սառը» և «հրդեհ» բառերի զուգակցումով՝ «Սառը հրդեհ է իմ հոգում հիմա», իսկ Սահյանը այն չի պահպանել՝ «Պաղ փրփուրներ են իմ հոգու վրա»:

Առավել հետաքրքիր են օքսիմորոն-բառախաղերը, որ սովորաբար կազմվում են նույն նախածո հականիշներով, հարանուններով: Օրինակ.

*Едет, едет милая,
Только нелюбимая...*

Սևակը պահպանել է համանուններով կազմված բառախաղը.

Գալիս է, գալիս ինքը սիրածս,
Ինքը սիրածս, բայց չսիրածս...

Կամ.

*Расскажу, как текла былая
Наша жизнь, что былой не была...*

Թարգմանիչը՝ Վ. Դավթյանը, պահպանել է բառախաղը, բայց՝ ի հաշիվ իմաստի. բնագրի «былой не была»-ն թարգմանված է ճիշտ հակառակ իմաստով.

*Կպատմեն, թե ինչպես հոսեց կյանքն իմ,
Կյանքն իմ խենթ, որ չեղյալ է եղել...*

Պատկերավորման միջոցներից հաճախ է գործածվում նաև համեմատությունը՝ «մի առարկայի կամ երևույթի նմանեցումը մի ուրիշին՝ նրանց համար ընդհանուր հատկության հիման վրա»¹²:

Եսենինը սովորաբար համեմատություն է կազմում «как», «словно», «как будто» կապական բառերով, որոնք հայերեն մեծ մասամբ թարգմանված են համապատասխան կապերով, շարկապներով, եղանակավորող բառերով: Սեր քննած մոտ 45 օրինակներում «как»-ը թարգմանված է «պես»-ով 10 դեպքում, «ինչպես»՝ 10, «նման»՝ 6, «կարծես» և «որպես»՝ մեկական դեպքում: «Словно»-ն 5 դեպքում թարգմանված է «պես»-ով, «կարծես (կարծես թե)»՝ 4, «ասես»՝ 2 դեպքում: «Как будто»-ն 3 դեպքում թարգմանված է «կարծես (կարծես թե)», 2 դեպքում՝ «ասես»: «Також... как» կառույցը մեկական դեպքում թարգմանված է համապատասխան «այնպես... ինչպես» և «այնքան... որքան» կառույցներով, 2 դեպքում՝ «պես» կապով, 2 դեպքում՝ «նման» կապով:

Զննված օրինակներից երկուսում կապական բառով արտահայտված համեմատությունը թարգմանված է «նմանվել» բայով, 7 դեպքում համեմատությունն ընդհանրապես բաց է թողնվել, 6 դեպքում՝ փոխարինվել փոխաբերությամբ:

Համեմատության մեջ սովորաբար առկա է այն առարկան, որը համեմատվում է, առարկան, որի հետ համեմատվում է և այն հատկանիշը, որի հիման վրա համեմատությունը կատարվում է:

Եսենինի սիրած հնարքներից է մարդկանց բույսերի ու կենդանիների հետ համեմատելը, բույսերը կենդանիների հետ և հակառակը:

Օրինակ՝ Եսենինի հաստատուն պատկերներից է ծառի բունը կենդանի արարածի ոտքի հետ համեմատելու պատկերը.

*И ноги босые, как телки под ворота,
Уткнули по кававам тополя...*

Այստեղ բարդիները համեմատվում են երինջների հետ, որտեղից էլ ծառի բունը կենդանու ոտքի հետ համեմատելու պատկերը:

Թարգմանությունների մեջ պահպանվել են համեմատության բոլոր երեք անդամները.

*Եվ բարդիները, ինչպես երինջներ դարպասների տակ,
Առուների մեջ խրել են իրենց ոտքերը բոբիկ...*

(3 Ա)

Եվ

*Ու բարդիները՝ ոտքերը բոբիկ,
Ջրերն են մտել հորթերի նման...*

(3 Թ)

Պարզապես թամրազյանը որոշ փոխակերպումներ է արել. բաց է թողել «под ворота»-ն, իսկ «по кававам»-ը փոխարինել է ավելի ընդհանուր «ջրեր»-ով:

Այս պատկերին մոտ է

*Как будто бы на корточках погреться
Присел наш клен перед костром зарн...*

Եթե բունը ծառի ոտքն է, ուրեմն ծառը կարող է նաև «պագել».

Կարծես չոքել է մեր տան դիմացի մենավոր թխկին...

(9 Ե)

¹² Վ. Զահուկյան, Ֆ. Խլղաթյան, Աշխ. ԿՊՀ, էջ 35:

Եսեմհնի համեմատությունները հաճախ կրկնվում են փոխաբերությունների ձևով.

Стережет голубую Русь

Старый клея на одной ноге...

3. Սահյանը թարգմանել է՝ «Կապույտ Ռուսիային արթուն կեսիկ ծեր թխկին՝ հեմված մի ոտքի վրա», իսկ 3ր. Թամրազյանը՝ «Այնտեղ հսկում է Ռուսիան՝ Թխկին՝ հեմված մի ոտքին»։ Մի ուրիշ բանաստեղծության մեջ թխկին նման է հարբած պահակի, որ «Утопая в сыробе, прямо розил ногу».

Սահյանը թարգմանել է.

Չնաթմբի մեջ խրվել, թողել ես ոտքը ստոի...

Հաստատուն պատկերներից է նաև մարդու աչքի համեմատությունը տերևների հետ.

О, если прорастят глазами,

Как эти листья, в глубь вь!

Սևակը համեմատությունը պահպանել է, բայց որոշ փոխակերպումներ է արել.

О, եթե աչքը արմատ արձակի,

Ինչպես տերևներն ու

Սաղարթը ծով...

Համեմատությունը կրկնվում է.

Не с того ли глаза мне топят,

Словно сплне лпстья червь?

Ղավթյանը համեմատությունը փոխարինել է փոխաբերությամբ.

Եվ դրանից չէ՞, որ որդերը սև

Աչքերիս կապույտ տերևն են ուտում...

Նույն համեմատությունը կա մի այլ բանաստեղծության մեջ.

Потому в грущу, осев,

Словно в лпстья, в глаза косые...

Բայց երկու թարգմանություններում էլ համեմատությունն անհետացել է.

Ուտի թախծում են՝ մտակյաց դարձած,

Հանձնված քո շեղ աչքերի խորքին...

(Պ Ա)

Եվ

Ու հիմա այսպես թախծում են ահա,

Ու այսպես տխուր աչքերիդ նայում...

(Գ Թ)

Կարծում են՝ կրկնվող համեմատությունը բաց թողնելը արդարացված չէ:

Այսպիսի հաստատուն պատկերներից է նաև արդեն հիշատակված “голова - золотая роза” համեմատությունը, որ կրկնվում է տարբեր տարիների բանաստեղծությունների մեջ որոշ փոփոխություններով (օրինակները բերված են մակդիրների բաժնում):

Եսեմհնի չափածոյում կարևոր տեղ ունեն զանազան կրկնությունները: Երբեմն բանաստեղծության սկզբում եղած պատկերը առանց փոփոխությունների կրկնվում է նույն բանաստեղծության վերջում, ինչպես: օրինակ.

Ты такая же простая, как все,

Как сто тысяч других в России...

Սևակը թարգմանության մեջ պահպանել է կրկնվող համեմատությունը.

Դու պարզ ես այնքան, որքան բոլորը,

Որքան Ռուսիայում հարյուր հազար կին...

Թամրազյանի պարբերակում փոփոխվում է շաղկապը. սկզբում՝

Դու այնպես պարզ ես, այնպես հասարակ,

Ինչպես բոլորը անձիր Ռուսիայում...

իսկ վերջում՝

Դու նույնքան պարզ ես, նույնքան հասարակ,

Ինչպես բոլորը անձիր Ռուսիայում...

Մի ուրիշ բանաստեղծության մեջ “Я такой же, как ты, хулиган” համեմատությունը վերջում կրկնվում է որոշ փոփոխություններով “Я и в песнях, как ты, хулиган”, որ եմինը թարգմա-

Նել է՝ «ես էլ եմ, քամի, քեզ պես խուլիզան» և վերջում՝ «ես երգով էլ եմ քեզ պես խուլիզան»:

Այսպիսի կրկնությունները բավական շատ են: Հաճախ բանաստեղծության սկզբում երգած համեմատությունը վերջում կրկնվում է իբրև փոխաբերություն կամ հակառակը.

*Я в глазах твоих увидел море,
Полыхающее голубым огнем...*

Փոխաբերությունը կրկնվում է համեմատության ձևով.

*Все равно - глаза твои, как море,
Голубым колышутся огнем...*

Թարգմանիչը՝ Վ. Դավթյանը, պահպանել է բնագրի պատկերները.

*Քո աչքերի մեջ ես ծովը տեսա,
Կապույտ կրակով բռնկված մի ծով...*

Եվ վերջում՝

*Մեկ է՝ աչքերդ, զույգ ծովերի պես,
Կապույտ կրակով ծփում են իմ դեմ...*

Կոժևնիկովան նկատում է, որ դարասկզբի ռուսական չափածոյում ակտիվանում է այլաբերությունների «ռեալիզացիան»։ «դրանք ձգտում են ռեալիզացիայի, ուղղակի իմաստով գործածվելու»¹³:

Օրինակ՝

*И деревья, как всадники,
Съехались в нашем саду...*

Համեմատությունը «ռեալիզացվել» է՝ վերածվելով փոխաբերության.

*Деревьяные всадники
Сезот коньтывый стук...*

Եմիըը «деревья, как всадники» համեմատությունը փոխարինել է գոյական որոշիչ-որոշյալ կապակցությամբ.

*Եվ հեծվոր-ծառերը
Դոփում են պարտեզում...*

Իսկ բնագրի բառախաղը՝ կազմված նույնարմատ «деревья-деревянным» բառերով, թարգմանիչը չի պահպանել.

*Ու դոփում են փայտե
Դեծվորները այգում...*

Բերենք համեմատության «ռեալիզացիայի» ուրիշ օրինակ: Բանաստեղծն իր գլուխը նմանեցնում է լամպի.

*Я парочво пду нечесавным,
С головой, как керосиповая лампа, на плечах...*

ահա թե ինչու այն կարող է լուսավորել «հոգիների անտերև աշունը».

*Ваших душ безлиственную осень
Мне нравятся в потемках о свеще ть...*

Եմիմի թարգմանության մեջ պահպանվել են բնագրի բոլոր պատկերները.

*.... Լամպի պես պահած գլուխս վերև,
Ինձ դուր է գալիս լույս տալ խավարում
Ձեր հոգիների աշնանն անտերև...*

Վ. Կովկը ամենատարածված թերություններից է համարում բնագրի փոխաբերությունները թարգմանության մեջ համեմատություններով փոխարինելը¹⁴: Իսկ Եսենինի բանաստեղծությունների թարգմանություններում ավելի հաճախ հակառակն է՝ բնագրի համեմատություններն են փոխարինվել փոխաբերություններով (օրինակներ արդեն բերել ենք):

Ելնելով վերոհիշյալից՝ այդ փոխարինումները պիտի առավելություն համարենք: Բայց միշտ չէ, որ դրանք արդարացված են: Օրինակ՝ մի բանաստեղծության մեջ Եսենինը զանգակատունը համեմատում է ջրադացայանի հետ, որից էլ գալիս է զանգերի համեմատությունը ցորենի պարկերի հետ.

¹³ Н. Кожевникова, Словоупотребление в русской поэзии начала 20-го века. М., 1986, с. 17-19.

¹⁴ Шкв В. Вовк, Языковые метафоры в художественной речи. Киев, 1986, էջ 130-131:

*Словно мельник, несет колоколья
Медные мешки колоколов...*

Թամրազյանը բաց է թողել համեմատությունը՝ «словно мельник...», և պատկերը մնացել է չբացահայտված, առանց այդ համեմատության հասկանալի չէ «զանգի պարկը».

*Չանգակատունն է քայլում՝
Չանգի պարկը շալակին...*

Ուրիշ օրինակ. եսեմիճն այսպիսի պատկեր ունի.

Как васильки во ржи, цветут в лице глаза...

Կոժևնիկովան մշուճ է, որ դարասկզբի ռուսական բանաստեղծության մեջ ավելի հաճախակի է դառնում «այլաբանությունների բարդացումը» («сложный троп») «փոխաբերությունը կազմում է այլաբանության՝ համեմատության, շրջառության, փոխանունության... մաս»¹⁵:

Վերը մշված օրինակում փոխաբերությունը՝ «цветут в лице глаза», համեմատության՝ «как васильки», մասն է: Իսկ եմիճի թարգմանության մեջ համեմատությունը բաց է թողնված, այն փոխարինված է սովորական գունային մակդիրով.

Դեմքիս մույն կա պ ու յ տ աչքերն են ծաղկում...

Ակնհայտ է, որ բացթողումը թուլացրել է պատկերի արտահայտչականությունը:

Բավական հաճախ եսեմիճն համեմատություն է կազմում գոյականի գործիական հոլովով. սրանք այսպես կոչված հ ա կ ա դ ա ռ ծ հ ա մ ե մ ա տ ու թ յ ու ն ն ե ռ ն են («образное сравнение»), որտեղ «համեմատյալը հանդես է գալիս իբրև համեմատելի»¹⁶: Հայերենը, ինչպես գիտենք, չունի համեմատություն կազմելու այսպիսի ձև, և թարգմանիչներն ամեն անգամ ստիպված են դրա փոխարեն գործածել այն միջոցները, որ կան հայերենում:

Երբեմն բնագրի հակադարձ համեմատությունները թարգմանվել են «պես», «նման» և ն կապերով, երբեմն, ինչպես մյուս դեպքերում, համեմատությունները փոխարինվել են փոխաբերություններով կամ ընդհանրապես բաց են թողնվել:

Բերենք հակադարձ համեմատությունների օրինակներ և դրանց թարգմանությունը.

И бродягой пойдуно Русь...

Սևալը հակադարձ համեմատությունը թարգմանել է «պես» կապով.

Շ ր ջ մ ո լ ի կ ի պ Ե ս կ անցնեն հյուղից հյուղ...

Թամրազյանը համեմատությունը բաց է թողել.

... ու ցուպս առած՝

Ուսիայով ազատ, անհոգ կշրջեն...

Կամ.

Они несжатой рожью на корню

Осталась догнивать и осыпаться...

Եվ Դավթյանը, և Թամրազյանը մույն «պես» կապով են թարգմանել համեմատությունը.

Նրանք հ ա ս կ ի պ Ե ս, որ մնացել են չհնձված արտում,

Պիտի որ փտեն ու թափվեն հողին...

(Կ Դ)

Նրանց մնում է աշնան հ ա ս կ ի պ Ե ս

Հանդարտ խոնարհվել գիջացած հողին...

(Հ Թ)

Արդեն ասել ենք, որ եսեմիճն հաճախ է իրար հետ համեմատում բույսերն ու կենդանիները: Օրինակ՝ ծառի տերևները նրան թաթեր են թվում.

Клев в листья в окна комват

Ветки лапами забросив...

Սախյանը հակադարձ համեմատությունը թարգմանել է «նման» կապով՝ «թաթերը» փոխարինելով «ծեռքեր»-ով.

Լորին ու թխկին փեղկերը բացել

Շյուղերն են պարզել ծ ե ո ք ե ռ ի ն մ ա մ...

Թամրազյանի տարբերակում համեմատությունը անհետացել է.

¹⁵ Н. Кожевникова, Գշլ. աշխ., էջ 18-19:

¹⁶ Նույն տեղում, էջ 17:

Նույն թխկին է ու նույն լորին,
Որ ճյուղերով խարխափելով...

Նկատենք, որ այս պատկերը կրկնվում է ուրիշ բանաստեղծության մեջ փոխաբերության ձևով.

*Держат ливы в зеленых лапах
Птичий гомов в щебетью...*

Թարգմանիչները պահպանել են բնագրի պատկերը.

*Լորենիներն են կանաչ թաթերով
Բռնել հավքերի երգերն աղմկոտ...*

(4 7)

*Խեղճ ճնճողուկների զվարթ աղմուկն էր
Պահուսն լորենին իր կանաչ թաթին...*

(7 Թ)

Սի բանաստեղծության մեջ եսենինն իր մտքերը համեմատում է մեղուների պարսի հետ՝ «И в голове проходят роem думы».

Սահյանը հակադարձ համեմատությունը փոխարինել է փոխաբերությամբ.

Եվ իմ գլխի մեջ պտույտ են գալիս մտքերի պարսեր...

Թամրազյանը համեմատությունը պարզապես բաց է թողել, որ իհարկե ազդել է պատկերի արտահայտչականության վրա. մեղուների պարսը սովորաբար տհաճ զուգորդություններ է առաջացնում՝ կաչուն, անբես ինչ-որ բանի.

Տխուր մտքեր են գլխովս անցնում...

Եսենինն այսպիսի կրկնվող պատկեր ունի.

*По пруду лебедем красным
Плывает красный закат...*

Եվ

*Снова выплыл из роши
Сквям лебедем красным...*

Այս հակադարձ համեմատությունները թարգմանվել են կամ կապերի միջոցով.

*Սեղմ վերջալույսը լճակում հիմա
Լողում է կարմիր կարապի նման...*

(7 5)

*Կարապի պես խավարը
Թավուտից դուրս լողաց...*

(9 է)

Կամ փոխարինվել փոխաբերությամբ.

*Լճի ջրերում լողում է կարմիր
Մայրամուտը, որ կարապ է դարձել...*

(7 Թ)

Երկու թարգմանիչներն էլ բաց են թողել հակադարձ համեմատությունը «He звенят лебязьей щесей рожь» տողում.

Չի ծփում վարսակն, հովը չի երգում...

(4 7)

Եվ

Երկարուկ հասկը չի զնգում հովից...

(7 Թ)

Եթե համեմատությունը մի առարկայի կամ երևույթի նմանեցումն է մի ուրիշին՝ նրանց համար ընդհանուր հատկության հիման վրա, ապա փոխաբերությունը «այն դարձույթն է, որի դեպքում առարկաների, երևույթների նմանեցման հիման վրա մի բառի... փոխարեն օգտագործվում է մի այլ բառ...»¹⁷:

Ս. Մելքոնյանը ասում է, որ «գեղարվեստական մտածողության յուրահատկությունները բառական մակարդակում թերևս ուրիշ ոչ մի միջոցով այնքան բնորոշ ու հարուստ ար-

¹⁷ Գ. Զահուկյան, Ֆ. Խլղաթյան, նշվ. աշխ., էջ 36:

տահայտություն չի կարող ունենալ, որքան փոխաբերության օգտագործումով»¹⁸: Այս է պատճառը, որ Վ. Վոպլը բերություն է համարում թարգմանության մեջ փոխաբերությունները համեմատություններով փոխարինելը. «... Այնհայտ է, որ պատկերի ուժն ու ազդեցությունը առավել մեծ է, երբ փոխաբերությունը թարգմանվում է իբրև փոխաբերություն, քան երբ այն փոխարինվում է համեմատությամբ»¹⁹:

Չնայած փոխաբերական իմաստը ետին պլան է մղում բառի անվանողական նշանակությունը, բայց փոխաբերության մեջ մի բառում առկա է միաժամանակ երկու (երբեմն ավելի) նշանակություն՝ առաջնային՝ տվյալ համատեքստից դուրս, և փոխաբերական տվյալ համատեքստում: Թարգմանչից պահանջվում է «ընթերցողին հասցնել ոչ միայն բառի առաջնային, հիմնական իմաստը, այլև երկրորդ՝ ենթադրվողը, որը, սակայն, առաջինին հավասար, ավելի հաճախ՝ գերադաս նշանակություն ունի»²⁰:

Եսենինի սիրած միջոցներից է փոխաբերության տեսակներից մեկը՝ անձնավորումը, երբ կենդանիներին, անշունչ առարկաներին վերագրվում են մարդկային հատկանիշներ: Բայց, ինչպես արդեն նշել ենք, Եսենինի համար չկան հստակ սահմաններ մարդու, կենդանու և բույսի միջև. նա հաճախ է մարդուն վերագրում կենդանու կամ բույսի, բույսերին՝ կենդանու հատկանիշներ:

Այս առումով Ակյոնովան շատ դիպուկ նկատում է. «Եսենինի հարաբերությունը բնության հետ սնահավատության աստիճան ինտիմ է»²¹:

Եսենինի չափածոյում 20-ից ավելի ծառատեսակներ, մոտ մի այդքան ծաղիկներ, բազմազան բույսեր (30-ից ավելի) ու կենդանիներ (25-30) կան: Բայց կենդանիներն ու բույսերը ավելի հաճախ ոչ թե այլաբանություններն են, այլ իրենց ուրախություններով ու տրևություններով, իրենց կյանքով ապրող արարածներ:

Եսենինի հաստատուն բառ-խորհրդանիշներից է թխկին, որ հանդիպում է ամենավաղ շրջանի գործերից սկսած մինչև վերջին տարիների բանաստեղծություններն ու պոեմները: Թխկին նույնանուն է քնարական հերոսի հետ.

Сам себя казался я таким же клевоm...

Սաիյանի թարգմանությամբ.

Ես ինձ թխկի թվացի՝ քեզ պես կանգնած այս այգում...

Կամ.

... старый клеv головой ва мевя похож...

Երկու թարգմանություններն իրար բավական մոտ են.

.... ինձ է նման

Այն հնամենի թխկին իր գլխով...

(Գ Ս)

Եվ.

.... այդ թխկին

Շատ է գլխով ինձ նման...

(Գ Թ)

Թխկին նաև հայրենի տան խորհրդանիշն է.

В те края, где я рос под клевоm...

Դավթյանը թարգմանել է.

Այն հեռաստանին, ու թխկենու տակ ես խաղ եմ արել...

Այն մանկության ընկերն է, որ հաճելի հուշեր է արթնացնում («Апрельских вечеров мне сваятся хмарь в сыр. Как будто бы... Присел наш клеv»):

Գեռանալով հայրենիքից՝ քնարական հերոսը նրան է թողնում իբրև պահապան՝ «Стережет голубую Русь Старый клеv»: Իսկ հայրենի տունը հիշելիս առաջինը թխկին է միտը գալիս, որ անհամբեր սպասում է իրեն՝ «Клеv в льяны... Идут тех, которых помвят»:

Իրար հետ ճակատագրով են կապված քնարական հերոսն ու թխկին.

¹⁸ Ս. Միրոնյան, Այնարկների հայոց լեզվի ռճաբանության, Երևան, 1984, էջ 93-94:

¹⁹ В. Вовк, նշվ. աշխ., էջ 131:

²⁰ Նույն տեղում, էջ 130:

²¹ Е. Аксенова, Талант и время. Ярослав., 1969, с. 64.

*Ныпче юность моя опшумела,
Как подгнивший под склами клея...*

Իսկ Դավթյանի թարգմանության մեջ չկա անդարձ անցած պատանեկության համեմատությունը արդեն չորացած թխկու հետ.

Պատանությունն իմ անցել է, չկա...

Ռուսիայի արթուն պահապան թխկին արդեն հարբած պահակի է նման.

Клея ты мой опавший, клея задезневельный...

... И как пьяный сторож, выйдя на дорогу...

Հարբած թխկու պատկերը հանդիպում է նաև ուրիշ բանաստեղծության մեջ.

Где-то на поле клея таится пьяный...

Տարիների բացակայությունից հետո վերադարձած բանաստեղծը չի ճանաչում հայրական տունը, որովհետև.

Приметный клея уж под окном не машет...

Թամրազյանը թարգմանել է.

էլ չի երևում մեր հին թխենին...

Նա բաց է թողել “под окном”-ը:

Սևակի տարբերակն ավելի մոտ է բնագրին.

Լուսամուտի տակ չի կանչում թխկին...

Ա. Մարչենկոն նկատում է, որ քնարական հերոսի և թխկու ճակատագրերի նմանությունը ավելի հստակ է ընդգծվում այսպես կոչված «փոքրիկ պոեմներում»²², (օրինակ “Возвращение на родину”, “Русь советская”, “Русь уходящая”, “Метель”...):

Հայրենիքում ամեն ինչ փոխվել է, այլևս չկան հին ընկերները, բոլորը մոռացել են և՛ իրեն, և՛ իր երգերը: Փոխվել են մարդիկ՝ իր համագյուղացիները, դարձել ուրիշ, օտար: Սակայն բանաստեղծության մեջ չկա քնարական հերոսի հստակ վերաբերմունքը կատարվածի նկատմամբ, միայն թխկին է կնճռոտվում գյուղացիների «ծուռտիկ, անլվա» խոսքերից.

И клеи морщатся ушами длинных веток...

Երկու թարգմանիչներն էլ բաց են թողել “ушами длинных веток” պատկերը.

Եվ կնճռոտվում են թխկիները հեգ...

(Հ Ա)

Խրտում է թխկին նրա խոսքերից...

(Հ Թ)

Ինքն իր հետ հակամարտության մեջ գտնվող բանաստեղծին թխկին արդեն «անարգանքի սյուն» է թվում, որից պետք է կախել մարդկանց և առաջին հերթին իրեն.

Какой он клея?

Он просто столб позорный -

На нем бы вешать...

Թարգմանիչների տարբերակները իրար բավական մոտ են.

Թխկի չի, նա, ոչ,

Անարգանքի սյուն՝

Շատերին է պետք կախել նրանից...

(Հ Թ)

Եվ

Ի՞նչ թխկի է նա:

Պարզապես սյուն է նա անարգանքի,

Նրանից միայն կախեին մարդկանց...

(Հ Ա)

Բայց հենց հաջորդ բանաստեղծության մեջ, ինքնահաշտության եկած բանաստեղծը (“Тряпачок колючей. Грусть в опале”) անմիջապես հիշում է, որ անտերի վիրավորել է հին ընկերը.

Мой бедный клея!

Простя, что я тебя обидел...

որ եմինը թարգմանել է.

²² Տե՛ս “Вопросы литературы”, 1979, N 1.

*Իմ տանջված թխկի,
Ներիր, եթե քեզ վիրավորել եմ...*

Շրջասության դեպքում առարկայի, երևույթի անունը տալու փոխարեն այն նկարագրվում է ավելի ծավալուն, ընդարձակ լեզվական միջոցներով: «Շրջասությունը նկարագրական բանականացնական անվանում է՝ բուն մենաբան անվանման փոխարեն կամ դրան զուգահեռ: Փոխարինումը կարող է կատարվել փոխաբերական իմաստավորումով կամ առանց դրա»²³:

Խոսելով էսենցիոն շրջասությունների մասին՝ Բակինան և Նեկրասովան հատկապես ընդգծում են իրենց կազմում գունային մակդիրներ ընդգրկողները, որոնք սովորաբար պատկանում են հաստատուն պատկերների թվին²⁴:

Ինչպես արդեն նշել ենք, «կապույտը» էսենցիոն ամենասիրած գույնն է՝ երազի, պատանեկության, մաքրության խորհրդանիշը: Օրինակ՝ այդ մակդիրով հաճախ է բնութագրվում բանաստեղծի հայրենիքը՝ Ռուսիան: Իսկ «Պարսկական մոտիվներ» շարքում էսենցիոն «կապույտ» մակդիրը գործածում է Պարսկաստանի նկատմամբ. շրջասությունների մեջ այն անվանում է մեկ՝ «Голубая родня Фирдуся»՝ Ղավթյանի թարգմանությամբ՝ «Ֆիրդուսու կապույտակ հայրենիք», մեկ՝ «Голубая да веселая страна»՝ «Խնդագին երկիր, օ՛, երկիր դու մով» (Վ Դ), մեկ՝ «В голубой в ласковой стране», որ Սահյանը թարգմանել է «Այն երկրի, որ միշտ մեղմ է ու պայծառ»՝ «կապույտ» մակդիրը փոխարինելով այլ տարբերակներով, կամ էլ՝ «шафрановый край»՝ «զաֆրանե երկիր» (Վ Դ):

Երկինք ասելու փոխարեն էսենցիոն ասում է «голубая пыль», «голубые роши», «голубые щави»: Մի բանաստեղծության մեջ՝ «небо - как колокол» համեմատության ռեալիզացիայից ծագել է «колокол синий» շրջասությունը.

Небо - как колокол,

Месяц - язык...

... В колокол синий

Я месяцем бью...

Մի ուրիշ բանաստեղծության մեջ երկինքը՝ «голубая трава» է.

Ягнелочек кудрявый - месяц

Гуляет в голубой траве...

Այստեղ երկու շրջասություն կա՝ լուսինը «զանգրահեր գառ» է, երկինքը՝ «երկնագույն խոտ»: Սահյանը պահպանել է շրջասությունները՝ բնագրի «կապույտ» մակդիրը փոխարինելով հոմանիշ «լուրթ»-ով.

Լ ու լ թ թ խ ո տ եր ու մ մ ան է գ ա ի ս

Լ ու ս ի ն ը՝ գ ա ռ գ ա ն գ Ր ա հ եր...

Մի բանաստեղծության մեջ այսպիսի շրջասություն կա.

Осень - рыжая кобыла - чешет гриву...

Սևակը պահպանել է բնագրի պատկերը.

Ս շ ու ն ը՝ մ ի դ ե ղ ի ն գ ա մ բ ի կ, բ ա շ ն է ք թ թ ու մ...

Թամրազյանը շրջասությունը փոխարինել է համեմատությամբ.

Ս շ ու ն ը՝ շ ե կ ն ժ ու յ գ ի պ ե ս բ ա շ ն է ք թ թ ու մ...

Ջրաղացը էսենցիոն համար «փայտե թռչուն» է՝ «Мельница - бревенчатая птица», որ Սահյանը թարգմանել է «Ջրաղացն անգամ- միայնակ թևով թռչունը փայտե», իսկ Թամրազյանը դարձյալ շրջասությունը փոխարինել է համեմատությամբ՝ «Ջրաղացն, ասես միաթև թռչուն...»: Վառարանը «աղյուսե ուղտ» է (և՛ Ղալթյան, և՛ Թամրազյան)՝ «верблюд кряпичный»: 1917 թ. հեղափոխության մասին էսենցիոն ասում է՝ «Тот ураган прошел» այս շրջասությամբ իր վերաբերմունքն արտահայտելով կատարվածի նկատմամբ. և՛ Թամրազյանը, և՛ Սահյանը նույն կերպ են թարգմանել «Այն մրրիկն անցավ»: Մի ուրիշ բանաստեղծության մեջ էսենցիոն «ոսկեգույն» մակդիրի փոխարեն գործածել է հետևյալ շրջասությունը՝ «волос топч цветом в осень», իսկ Սահյանի թարգմանության մեջ շրջասությունը չկա՝ «Ու փայփայեի մազերդ ոսկի»:

²³ Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:

²⁴ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Մ. Бакива, Е. Некрасова, Эволюция поэтической речи в 19-20 вв. Перифраза. Сравнение. М., 1986:

²⁵ «Вопросы литературы», նշվ. համարը:

Մարչենկոն ասում է, որ Եսենինի չափածոն «մի մեծ քնարական պոեմ է՝ կազմված առանձին բանաստեղծություններից, որոնք իրար հետ կապված են... շրթայի օղակների պես»²⁵։ Թարգմանիչները փոխակերպումներ անելիս պիտի հաշվի առնեն այս հանգամանքը, որով հետև երբեմն մի փոխակերպումն էլ կարող է խախտել շրթայի ամբողջականությունը։

ՀԱՄԱՈՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԴ- Վահագն Դավթյան
ՀԹ- Հրաչյա Թամրազյան

ՀՍ- Համո Սահյան
ՊՍ- Պարույր Սևակ
ԳԷ- Գևորգ Էմին

А. С. КАМАЛЯН.- Перевод образно-изобразительных средств поэзии С. Есенина. - Одна из важных проблем теории перевода - проблема трансформации образа в художественном переводе. Трансформация при переводе неизбежна как в силу лингвистических, так и экстралингвистических причин. В статье прослеживаются изменения в элементах художественного образа при переводе с русского на армянский (имеются в виду микрообразы: эпитет, оксюморон, сравнение, метафора, олицетворение, перифраза...).